ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28/2016
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԾԱԾԿԻ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԵԱՆՑԵՐԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ՆՇԱԳԾՄԱՆ

ք. Երևան <<27>> հունվարի 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե. Մարգարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Սույն Պայմանագրով սահմանված 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 37 421 339,5 (երեսունյոթ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր երեսունինը ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 8 533 112.5 (ութ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար հարյուր տասներկու ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 10 585 663 (տաս միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և

ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 18 302 564 (տասնութ միլիոն երեք հարյուր երկու հազար հինգ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Սույն համաձայնագրով կապալառուին կտրամադրվի կանխավճար՝ համաձայնագրով նախարեսված ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ընդհանուր գումարի մինչև 20 (քսան) տոկոսի չափով . Պայմանով, որ Կապալառուն նախապես Պատվիրատուին կներկայացնի երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով:

2.3 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Երևան, Գ. Քոչարի 21
Կենտրոնական Գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 900011012136	ՀՎՀ 19300-46409290100
ԳՀՀ 02565518	ԳՀՀ 01561611
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 1
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-28/2016 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2016թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
[redacted]						
1	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	-	**4,266,556,0**	**4,266,556-50**	-	**8,533,112-50**
2	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	-	**4,234,265,0**	**6,351,398,0**	-	**10,585,663,0**
3	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	-	**9,151,282,0**	**9,151,282,0**	-	**18,302,564,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձարան
ՀՎՀՀ 90001012136
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Քոչարի 21
«Կոնսալբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 19900-4640929000
ՀՎՀՀ 01561811

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28/2016 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	1,706,623,0	1,706,623,0	1,706,623,0	3,413,245,0	3,413,245,0	3,413,245,0	8,533,112-50	8,533,112-50	8,533,112-50	8,533,112-50	8,533,112-50	8,533,112-50	8,533,112-50
2	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	2,117,133,0	2,117,133,0	2,117,133,0	3,810,839,0	3,810,839,0	3,810,839,0	10,585,663,0	10,585,663,0	10,585,663,0	10,585,663,0	10,585,663,0	10,585,663,0	10,585,663,0

3	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների	3,660,513,0	3,660,513,0	3,660,513,0	7,321,026,0	7,321,026,0	7,321,026,0	18,302,564,0	18,302,564,0	18,302,564,0	18,302,564,0	18,302,564,0	18,302,564,0	18,302,564,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գրանցապետարան
ՀՎՀՀ 00001012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Քոչարի 21
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀ 19300-46409290100
ՀՎՀՀ 01561611

(ստորագրություն)

"БЕЛЛИС"
"BELL.S."

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԾԱԾԿԻ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԵԱՆՑԵՐԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ՆՇԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28»

ք. Երևան «21» դեկտեմբեր 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե. Մարգարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 /քառասուն/ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 37 421 339,5 (երեսունյոթ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր երեսունինը ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 8 533 112.5 (ութ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար հարյուր տասներկու ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 10 585 663 (տաս միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 18 302 564 (տասնութ միլիոն երեք հարյուր երկու հազար հինգ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրակացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 7 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Երևան, Գ. Քոչարի 21
Կենտրոնական Գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 19300-46409290100
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 01561611
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«21» դեկտեմբեր 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.- ի դեկտեմբերի 31-ը

1.6. Պատվիրատու - Հ Հ տրանսպորտի և կապի նախարարություն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Ավտոմոբիլային ճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 13-Ն "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատերին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները հաստատելու մասին" որոշման մեջ բերված պահանջների և կանոնների համապատասխան:
2. Նշագծման տիպային համարը, ձևը, գույնը, չափերը և նշանակությունը, ինչպես նաև ներկի հետ լույս անդրադարձնող լրացուցիչ նյութերի օգտագործումը որոշում է պատվիրատուն:
3. Գծանշումներ կատարելիս՝ դրանց շեղումը նախագծային դրույթից չպետք է գերազանցի 5 սմ-ը:

4. Գծանշվող գծերի չափերի շեղումները չպետք է գերազանցեն՝
1) 1 սմ-ը՝ գծի լայնությամբ,
2) 5 սմ-ը՝ նրբագծերի և խղվածքների երկարությամբ:
5. Նոր գծապատկերով գծանշում կատարելու դեպքում հին գծանշումը չպետք է տեսանելի լինի:
6. Գծանշումը շահագործման պահից օրվա բոլոր ժամերին պետք է լավ տեսանելի լինի (ծածկի վրա ձյան բացակայության պայմանում):
7. Նշագծումը իրականացվում է նշագծման համար նախատեսված լաքաներկային նյութերով, որոնք պետք է ունենան 6 ամսից ոչ պակաս ծառայության ժամկետ և ապահովեն նշագծվող ճանապարհի բնութագրերին համապատասխան լուսանդրադարձման և պայծառության գործակիցները: Այն դեպքում, երբ գշագծման շահագործման ժամկետում ի հայտ է գալիս, որ կապալառու կազմակերպությունը չի ապահովել նշված ծառայության ժամկետը, ապա կապալառու կազմակերպությունը պարտավոր է իր սեփական ֆինանսական և տեխնիկական միջոցներով իրականացնի նոր նշագծում՝ ապահովելով պահանջվող ծառայության ժամկետը:

2. Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը (2016 թ.-ի համար)

Մարզ, Տարածաշրջան	Միջպետական - I		Միջպետական - II-IV		Հանրապետական - II-IV		Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	միավորի արժեքը	Ընդամենը գումարը (ՀՀ դրամ)
	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ/			
Լոռի	0.0		135.5		0.0		7452.5	1145.0	8 533 112.5
Թումանյան			0.0	0.0	0.0	0.0	0.0	1145.0	0.0
Գուգարք			42.7	2348.5	0.0	0.0	2348,5	1145,0	2689032,5
Ստեփանավան			26.0	1430.0	0.0	0.0	1430,0	1145,0	1637350,0
Սպիտակ			46.3	2546.5	0.0	0.0	2546,5	1145,0	2915742,5
Տաշիր			20.5	1127.5	0.0	0.0	1127,5	1145,0	1290987,5
Շիրակ	0.0		91.5		76.3		9229.0	1147.0	10 585663,0
Ախուրյան			39.6	2178.0	13.0	715.0	2893,0	1147,0	3318271,0
Անի			21.6	1188.0	39.6	2178.0	3366,0	1147,0	3860802,0
Աշոցք			30.3	1666.5	0.0	0.0	1666,5	1147,0	1911475,5
Ամասիա .			0.0	0.0	0.0	0.0	0,0	1147,0	0,0
Արթիկ			0.0	0.0	23.7	1303.5	1303,5	1147,0	1495114,5
Տավուշ	0.0		131.6		91.0		15943,0	1148,0	18 302564,0
Դիլիջան			36.3	5696.5	20.0	1100.0	6796,5	1148,0	7802382,0
Իջևան			48.3	2656.5	18.0	990.0	3646,5	1148,0	4186182,0
Նոյեմբերյան			47.0	2585.0	0.0	0.0	2585,0	1148,0	2967580,0
Տավուշ					53.0	2915.0	2915,0	1148,0	3346420,0

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և
ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքներ

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ծրագիր 2016թ.				
	Սպասարկվող ճանապարհահատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
Թումանյանի տարածաշրջան					
Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 33,8-կմ 76,9	43.1կմ	II-IV	0.00	55	0.0
Ընդամենը			0.00		0.0

Միջպետական - II-IV			**0.00**		**0.0**
Հանրապետական - II-IV			**0.00**		**0.0**
Գուգարքի տարածաշրջան					
Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ116,4-կմ126.9 և կմ 126.9-կմ135,4 /առանց Պուշկինի թունելի/	19,0 կմ	II-IV	19.00	55	1045.0
Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 0-կմ 33,8	33.8 կմ	II-IV	0.00	55	0.0
Մ-8 Վանաձոր-Դիլիջան կմ 10.5-կմ 34.2	23,7 կմ	II-IV	23.70	55	1303.5
Ընդամենը			**42.70**		**2348.5**
Միջպետական - II-IV			**42.70**		**2348.5**
Հանրապետական - II-IV			**0.00**		**0.0**
Ստեփանավանի տարածաշրջան					
Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 137,2-կմ163.2	26կմ	II-IV	26.00	55	1430.0
Ընդամենը			**26.00**		**1430.0**
Միջպետական - II-IV			**26.00**		**1430.0**
Հանրապետական - II-IV			**0.00**		**0.0**
Սպիտակի տարածաշրջան					
Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ96.4- կմ 116,4	20.0 կմ	II-IV	20.00	55	1100.0
Մ-7 Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ 0-կմ27,2/առանց Նալբանդի թունելի/	26.3	II-IV	26.30	55	1446.5
Ընդամենը			**46.30**		**2546.5**
Միջպետական - II-IV			**46.30**		**2546.5**
Հանրապետական - II-IV			**0.00**		**0.0**
Տաշիրի տարածաշրջան					
Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 163.2-կմ183,7	20,5 կմ	II-IV	20.50	55	1127.5
Ընդամենը			**20.50**		**1127.5**
Միջպետական - II-IV			**20.50**		**1127.5**
Հանրապետական - II-IV			**0.00**		**0.0**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծման ենթակա հատվածները

No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ծրագիր 2016թ.				
		Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
Ախուրյանի տարածաշրջան						
1	Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118.9 և կմ130,1-կմ143,4	24,0 կմ	II-IV	24,00	55	1320,0
2	Մ7 Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2--կմ42.8	15,6կմ	II-IV	15,60	55	858,0
3	Հ-75 Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 կմ60,2-կմ73.2	13.0 կմ	II-IV	13,00	55	715,0
	Ընդամենը			**52,60**		**2893,0**
	Միջպետական - II-IV			**39,60**		**2178,0**
	Հանրապետական - II-IV			**13,00**		**715,0**
Սևհի տարածաշրջան						
1	Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ 86,6 -կմ108,2	21.6կմ	II-IV	21,60	55	1188,0

2	Հ-75 Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 կմ29.6-կմ60,2	30.6կմ	II-IV	30,60	55	1683,0
3	Հ-21 Հ-75-Հորոմ-Արթիկ-Ալագյազ կմ0-կմ9,0	9.0կմ	II-IV	9,00	55	495,0
	Ընդամենը			**61,20**		**3366,0**
	Միջպետական - II-IV			**21,60**		**1188,0**
	Հանրապետական - II-IV			**39,60**		**2178,0**
			Աշոցքի տարածաշրջան			
1	Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ 143.4 -կմ173.7	30.3կմ	II-IV	30,30	55	1666,5
	Ընդամենը			**30,30**		**1666,5**
	Միջպետական - II-IV			**30,30**		**1666,5**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
			Ամասիայի տարածաշրջան			
1	Հ-32 Գյումրի-Կապս-Ամասիա-ՄՃ /Մ-1/ կմ 14,2-կմ31,2	17,0 կմ	II-IV	0,00	55	0,0
	Ընդամենը			**0,00**		**0,0**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
			Արթիկի տարածաշրջան			
1	Հ-21 Հ-75-Հորոմ-Արթիկ-Ալագյազ կմ9,0-կմ32,7	23.7կմ	II-IV	23,70	55	1303,5
	Ընդամենը			**23,70**		**1303,5**
	Հանրապետական - II-IV			**23,70**		**1303,5**

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր օգտագործման

միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծման

ենթակա հատվածները

No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ծրագիր 2016թ.				
		Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
			Դիլիջանի տարածաշրջան			
1	Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ83,190-կմ111,7	28,51կմ	II-IV	18,50	255,00	4717,5
				10,00	55,00	550,0
2	Մ-8 Վանաձոր-Դիլիջան կմ 34.2-կմ42.0	7,8 կմ	II-IV	7,80	55,00	429,0
3	Հ-30 Մ4-Ճամբարակ-Դրախտիկ կմ0-կմ10.1	10.1կմ	II-IV	10,10	55,00	555,5
3	Հ-51 Մ4-Հաղարծինի հուշարձան կմ 0-կմ6,0	6,0 կմ	II-IV	6,00	55,00	330,0
6	Մոտեցում Գոշավանքին	3,9կմ	II-IV	3,90	55,00	214,5
	Ընդամենը			**56,30**		**6796,5**
	Միջպետական - II-IV			**36,30**		**5696,5**
	Հանրապետական - II-IV			**20,00**		**1100,0**
			Իջևանի տարածաշրջան			
1	Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ111,7-կմ 148	36,3կմ	II-IV	36,30	55,00	1996,5
3	Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 0-կմ12,0	12,0 կմ	II-IV	12,00	55,00	660,0
4	Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պարավաքար-Այգեպար կմ 0.0-կմ18.0	18.0 կմ	II-IV	18,00	55,00	990,0
	Ընդամենը			**66,30**		**3646,5**
	Միջպետական - II-IV			**48,3**		**2656,5**
	Հանրապետական - II-IV			**18,00**		**990,0**
			Նոյեմբերյանի տարածաշրջան			

1	Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 76,9-կմ 91,2	14,3 կմ	II-IV	0,00	55,00	0,0
2	Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 12-կմ59,0	47,0 կմ	II-IV	47,00	55,00	2585,0
	Ընդամենը			**47,00**		**2585,0**
	Միջպետական - II-IV			**47,00**		**2585,0**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
			Տավուշի տարածաշրջան			
1	Հ-36 Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ 25,0-կմ67,5	42,5կմ	II-IV	16,00	55,00	880,0
2	Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պարավաքար-Այգեպար կմ18.0-կմ25	7.0կմ	II-IV	7,00	55,00	385,0
3	Հ64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի կմ 0- կմ 32,5	32,5 կմ	II-IV	30,00	55,00	1650,0
	Ընդամենը			**53,00**		**2915,0**
	Հանրապետական - II-IV			**53,00**		**2915,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02585518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Քոչարի 21
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19800-46409290100
ՀՎՀՀ 01561611

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«____» _____ 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-28
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«____» _____ 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-28
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-28»

ք. Երևան «14» դեկտեմբեր 2015թ.

«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ե. Մարգարյանի (անձնագիր՝ N AK0367643 տրված է 25.08.2009թ., 004-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Քոչարի 21
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-46409290100
ՀՎՀՀ 01561611

տնօրեն՝ Ե. Մարգարյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1

"__" _____ 20 թ.

Վճարող՝ <<ԲԵԼԼԻՍ>> ՍՊԸ ՀՎՀՀ - 01561611	ԴԵԲԵՏ 19300-46409290100	ԳՈՒՄԱՐ 3 742 134
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ		
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) երեք միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հարյուր երեսունչորս ՀՀ դրամ
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ երեք միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հարյուր երեսունչորս ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1

Վճարման նպատակը
պայմանագրի կատարման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-28

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /Է. Սարգսյան/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ